

ՎԱՋԵ ԹՈՐՈՍՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի պետության և իրավունքի
տեսության առարկայի դասախոս

**ԱՇԽԱՐՀԻԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔ**

Հողվածում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետությունում պետության ձևի բնութագրիչներից մեկի՝ աշխարհիկ պետության սահմանդրական կարգի հետազոտությանը:

Կարևորելով աշխարհիկ պետության սկզբունքի իրացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, բացահայտելով աշխարհիկ պետության մեջ կրոնական կազմակերպությունների և պետական իշխանության մարմինների փոխգործակցության կառուցակարգերը, կատարվել է եզրահանգում՝ աշխարհիկ պետության մեջ կրոնական նորմերը չեն հանդիսանում իրավական համակարգի մաս, կրոնական կազմակերպությունները առանձնացված են պետական իշխանության մարմիններից, բացառությամբ՝ ազգային եկեղեցու կարգավիճակ ունեցող կառույցներից, ինչպիսին է օրինակ՝ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնաբառեր- աշխարհիկ պետություն, եկեղեցի, կրոնական կազմակերպությունների և պետական իշխանության մարմինների փոխգործակցության կառուցակարգ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ կրոնական կազմակերպությունները անջատ են պետությունից: Սահմանադրական այս նորմի բովանդակությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում պետության կարևոր բնութագրիչներից է նրա աշխարհիկ լինելը:

Բացի այդ, Սահմանադրությունը բովանդակում է նաև սկզբունքային նորմերի շարք, որոնք ևս առնչվում են սահմանադրական կարգի այդ կարևոր սկզբունքի՝ աշխարհիկ պետության իրացմանն ու երաշխավորմանը (հոդվ. հոդվ.՝ 3, 8, 17, 25, 28, 29, 41, 42, 45 և այլն):

Աշխարհիկ պետություն հասկացությունն ինքնին, ոչ մի դեպքում չի կարող նույնացվել ոչ աթեիստական, ոչ էլ կղերական պետության հասկացության հետ: Բայց և այնպես, տեսական-իրավական մակարդակում տակավին առկա է պետության աշխարհիկությունը հասկանալու անբավարար միատեսակության խնդիրը: Ինչ վերաբերում է Սահմանադրության 41-րդ հոդվածի կարգավորմանը, որը երաշխավորում է յուրաքանչյուրին մտքի, խղճի, կրոնի ազատություն, ընդգրկում է իրավունքների որոշակի համալիր, որոնց առկայությունն անհրաժեշտ է աշխարհիկ պետության սկզբունքի իրականացման համար:

Այսպես, «աշխարհիկ պետություն» հասկացությունն ինքնին արտացոլում է տվյալ պետության վերաբերմունքը կրոնի նկատմամբ: Աշխարհիկ է այն պետությունը, որում կրոնական կազմակերպությունները առանձնացված են պետական

իշխանության մարմիններից և չեն միջամտում նրանց գործունեությանը, միևնույն ժամանակ կրոնական կազմակերպությունները ունեն գործունեության սեփական ոլորտը, որին, իր հերթին, չի միջամտում պետությունը, և որտեղ՝ ոչ մի կրոն չի կարող հաստատվել որպես պետական կամ պարտադիր:

Անշուշտ, աշխարհիկ պետության մեջ կրոնական կազմակերպությունները քաղաքացիական հասարակության ինստիտուտներ են, այլ ոչ թե պետական ինստիտուտներ: Այս հանգամանքը, սակայն, չի բացառում կրոնական կազմակերպությունների և պետության փոխգործակցության և համագործակցության հնարավորությունը որոշակի ոլորտներում: Ընդ որում, պետության և կրոնական կազմակերպությունների փոխհարաբերություններում անհրաժեշտ են որոշակի շրջանակներ և սահմանափակումներ: Այսպես, պրոֆեսոր Ռ. Վ. Ենգիբարյանի կարծիքով՝ «տարբեր դավանանքների իրավահավասարությունը, կրոնական (ինչպես և աթեիստական) միավորումների կազմակերպման, գործառույթի իրականացման և գործունեության ազատությունը օրենքի շրջանակներում, պետության միջամտության անթույլատրելիությունը քաղաքացիների՝ եկեղեցու հետ ունեցած հարաբերություններին և կրոնական միավորումների ներքին գործերին, ինչպես նաև եկեղեցու, կրոնական միավորումների չմիջամտելը պետության գործերին, քաղաքականությանը, տեղական ինքնակառավարմանը, կրթության համակարգի առանձնացումը եկեղեցուց և կրոնական կազմակերպություն-

www.journal.lawinstitute.am

ներից»¹:

Աշխարհիկ պետության հայեցակարգը խորապես ըմբռնելու համար հարկավոր է բացահայտել դրա ծագման պատմական ելակետերը, զարգացման ուղիները²:

Աշխարհիկ պետության գաղափարը գոյություն ունի դեռևս հին դարաշրջանից: 16-րդ դարի վերջում Գերմանիայում, իսկ հետագայում եվրոպական մյուս երկրներում ժողովրդական լայն շարժում ծավալվեց կաթոլիկ եկեղեցու դեմ³: Գերմանիան ապրում էր տնտեսական և քաղաքական սուր ճգնաժամ: Անկում էին ապրում առևտուրը, հողագործությունը, արհեստագործական արդյունաբերությունը, իսկ հոգևոր և աշխարհիկ կալվածատերերը և քաղաքական բուրժուազիան ժողովրդին խեղդում էին ծանր հարկերով⁴: Այս պատմական ժամանակաշրջանում տեղի է ունենում ապակրոնականացման գործընթաց, որի նախածեղծողներն էին կրոնական գործիչներ Մարտին Լյութերը, Հանս Թաուսենը, Ուլրիխ Յվինգլին, Ժան Կալվինը և ուրիշներ:

Աշխարհիկ պետության հայեցակարգի առաջացման և կայացման գործընթացում ի հայտ են գալիս աշխարհիկ գիտությունը, արվեստը, տիեզերքի վերաբերյալ աշխարհիկ ընկալումը, ձևավորվում է աշխարհիկ իրավագիտակցությունը (նորմատիվ ակտերի՝ որպես հասարակական կյանքի հիմքերի ընդունում, կրոնական դոգմաների և պատկերացումների աստիճանական թուլացում):

Հարկ է նշել, որ աշխարհիկ պետության գաղափարի հիմնադիր է համարվում քրիստոնյա աստվածաբան, Վիտտենբերգի համալսարանի պրոֆեսոր Մարտին Լյութերը: Իր «Աշխարհիկ իշխանության մասին» գիտական աշխատությունում (1523թ.) նա գրում էր, որ «եթե ամբողջ աշխարհը կազմված լիներ իրական քրիստոնյաներից (իրական հավատացյալներից), ապա ոչ իշխանների, ոչ թագավորների, ոչ սրի և ոչ էլ օրենքի կարիք կլիներ: Մակայն մարդկանց միայն փոքրաթիվ մասն է իրեն քրիստոնյայի պես պահում, չարերը միշտ ավելի շատ են, քան բարեպաշտները: Այդ պատճառով աստված հաստատել է երկու կառավարման ձև՝ հոգևոր (իրական հավատացյալների համար) և աշխարհիկ (չարերին զսպող, արտաքին խաղաղությունն ու հանգիստը նրանց պահպանել ստիպող): Բայց աշխարհիկ իշխանության օրենքները տարածվում են մարմնից և ունեցվածքից ոչ հեռու: Աշխարհիկ իշխանությունը չունի ոչ իրավունք, ոչ էլ ուժ՝ մարդկանց օրենքներ թելադրելու համար: Այն ամենը ինչ կապված է հավատքի հետ, պետք է լինի ազատ: Յուրաքանչյուրի խղճի գործն է՝ ինչպես է նա հավատում կամ չի հավատում»:

Աշխարհիկ պետության հայեցակարգի նշանավոր ներկայացուցիչ իտալացի փիլիսոփա և քաղաքական գործիչ Նիկոլո Մաքիավելին քրիստոնեության՝ որպես պետական գաղափարախոսության, հակառակորդներից էր: Մաքիավելին որպես պատմության շարժիչ ուժ՝ դիտարկում էր մարդկային եսասիրությունը, որի դեպքում՝ առաջին պլան էին մղվում մարդկային բնույթի արատավոր կողմերը: Ռուս ուղղափառ եկեղեցու արքեպիսկոպոս Ա. Վ. Մենը արդարացիորեն նկատել է, որ «Մաքիավելին արդարացնում է ամենամոծեղ մարդկային կրքերից մեկը՝ իշխանության ձգտումը»⁵: Այդ պատճառով Մաքիավելին առանձնացնում է քաղաքականությունը ոչ միայն բարոյականությունից, այլև կրոնական կանոններից: Հենց նա է հանդիսանում բացարձակ, ոչնչով չսահմանափակված իշխանության հայեցակարգի հիմնադիրը, որը ձևակերպել է «Տիրակալը» հայտնի աշխատությունում:

Իրավագետ Պ. Ն. Դոգորցևը իր աշխարհիկ պետության զարգացման պատմաիրավական հետազոտության մեջ նշում է, որ «աշխարհիկ պետությունը աստվածապետությանը հակադրված ոչ եկեղեցական պետությունն է...»:

Մեկ այլ իրավագետ՝ Ս. Է. Գենիկաևան գտնում է, որ «աշխարհիկության հասկացությունը պետք է հասունանա հանրային գիտակցության խորքերում՝ փորձերի և սխալների եղանակով, քանի որ իրական աշխարհիկությունը կարևորագույն հանրային առաքինություններից մեկն է, քաղաքացիական ինքնագիտակցության, քաղաքացիների սոցիալական ստեղծագործության արտադրանքը»:

«Աշխարհիկ» և «պետություն» հասկացությունների միավորման ընթացքում «աշխարհիկ պետություն» բառակապակցության մեջ տեղի է ունենում «աշխարհիկ» հասկացության իմաստային փոփոխություն, որը չլինելով հակակշիռ է կրոնականին, չեզոք դիրք է գրավում կրոնի և աթեիստական աշխարհընկալման նկատմամբ: Այսպիսով, «աշխարհիկը» իրենից ներկայացնում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պահպանման երաշխիք՝ անկախ նրա աշխարհընկալումից և պատկերացումներից:

Ներկայումս աշխարհիկ պետության սահմանման վերաբերյալ գոյություն ունի տեսակետների բազմազանություն: Ի տարբերություն արտասահմանյան երկրներում կուտակված տեսական-իրավական վերլուծության արդյունքների, հայրենական իրավագիտության մեջ բավականին սուղ են «աշխարհիկ պետության» սահմանումները: Անշուշտ, անհրաժեշտ է նկատել, որ հաճախ տարբեր հեղինակների հետազոտությունների վրա ազդում է նրանց կրոնականության աստիճանը, ինչը խան-

գարում է օբյեկտիվորեն գնահատելու աշխարհիկ պետության հասկացության մեկնաբանության առկա խնդիրն ու պետության և կրոնական միավորումների փոխգործակցության սահմանները: Ընդ որում, իշխանական լիազորություններով օժտված որոշ մարդկանց անձնական վերաբերմունքի պատճառով բացակայում են պետության և կրոնական միավորումների շահերի անկախությունն ու հավասարակշռությունը՝ իրենց գործունեության և իրավասության համապատասխան ոլորտներում:

Պրոֆեսորներ Գ.Գ. Հարությունյանը և Մ.Վ. Բազալը նշում են, որ. «աշխարհիկ պետությունը իր կազմակերպման և գործունեության վրա կրոնի ազդեցությունից ազատ պետությունն է: Աշխարհիկ պետության մեջ հետևողաբար կատարված է եկեղեցու և պետության անջատումը»:

Համաձայն իրավագիտության դոցենտ Ա. Ֆ. Մեշերյակովայի. «Աշխարհիկ պետությունը հանրային իշխանության կազմակերպման այնպիսի ձև է, որի պարագայում պետությունն ու եկեղեցին առանձնացված են և միևնույն ժամանակ փոխգործակցում են միմյանց հետ, պետական կամ պաշտոնական կրոնը բացակայում է, ապահովվում են կրոնական միավորումների հավասարությունը, խղճի ազատությունն ու քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ կրոնի հանդեպ վերաբերմունքից, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում՝ անձի, պետության և կրոնական միավորումների շահերի հավասարակշռությանը հասնելու նպատակով»:

Տվյալ սահմանման մեջ հատուկ դեր է հատկացվում պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցությանը, որտեղ հանրային նշանակության առանցքային նպատակ է հանդիսանում բարեգործությունը, սոցիալական աջակցությունը կարիքավորներին և այլն:

Միաժամանակ, պրոֆեսոր Օ Ե. Կուտաֆինը տալիս է «աշխարհիկ պետության» հետևյալ սահմանումը. «Աշխարհիկ է համարվում այն պետությունը, որտեղ չկա պաշտոնական կրոն, և ոչ մի դավանանք չի ընդունվում որպես պարտադիր կամ գերադասելի: Այդպիսի պետության մեջ կրոնը, դրա կանոնները և դոգմաները, ինչպես նաև՝ կրոնական կազմակերպությունները, իրավասու չեն ազդելու պետական կարգի, պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության, պետական կրթական համակարգի և պետության գործունեության այլ ոլորտների վրա»¹¹: Իր սահմանման մեջ նա միաժամանակ հիշատակում է պետական իշխանության մարմինների աշխարհիկությունը որպես պետության գործառույթի իրականացման պայմաններից մեկը, որը, մեր կարծիքով, հանդիսանում է աշխարհիկ պետության գոյության

կարևոր պայման:

Պրոֆեսոր Ի. Վ. Պոնկինը սահմանում է աշխարհիկ պետությունը որպես «պետություն, որն ապահովում է պետական ինստիտուտների և կրոնական կազմակերպությունների (ինչպես նաև այն միությունների, որոնց գործունեությունն ուղղված է որոշակի գաղափարախոսության տարածմանը) անկախությունն ու ինքնիշխանությունը՝ իրենց իրավասության համապատասխան ոլորտներում, երաշխավորում է պետական կրոնի և գաղափարախոսության՝ որպես պարտադիր սահմանման անթույլատրելիությունը...»:

Այս հարցի քննարկման համատեքստում խնդրին բովանդակալից անդրադառնում է ռուս իրավագետ Վ. Ա. Տումանովը. «Աշխարհիկ պետությունը այն պետությունն է, որտեղ հետևողականորեն իրականացված է եկեղեցու անջատումը պետությունից, չկա որևէ պետական կամ պարտադիր կրոն, ճանաչվում է կրոնի և աթեիզմի, կրոնական և հակակրոնական հայացքների ազատությունը»¹³: Բայց տվյալ հասկացության մեջ անհասկանալի է «հակակրոնական հայացք» եզրույթի գործածությունը, քանի որ հակակրոնականությունը, մեծ հաշվով, աթեիզմի հոմանիշն է հանդիսանում, որն արդեն իսկ հիշատակված է հասկացության մեջ:

Իսկ պրոֆեսոր Լ. Օ. Իվանովան իր սոցիոլոգիական հետազոտության մեջ ենթադրում է, որ. «Պետությունը, հանդես գալով որպես աշխարհիկ, չի խախտում խղճի ազատության սկզբունքը, երբ արտահայտում է ոչ միատեսակ վերաբերմունք տարբեր դավանանքային համայնքների նկատմամբ՝ ելնելով «համընդհանուր բարօրություն» հասկացությունից»¹⁴: Մեր կարծիքով, հեղինակը «համընդհանուր բարօրություն» եզրույթի իմաստային բովանդակության մեջ ներդնում է որոշակի բարոյական արժեքներ, իսկ «ոչ միատեսակ վերաբերմունքը» պետության քաղաքականությունն է՝ սահմանափակելու ապակառուցողական կամ մանիպուլացնող կրոնական միավորումների գործունեությունը:

Պետության և կրոնական կազմակերպությունների հարաբերակցության վերաբերյալ հետևյալ կարծիքն ունի պրոֆեսոր Ս. Պ. Լուպարևը. «Աթեիզմն ու կրոնը պետք է հավասարապես հեռացված լինեն իրեն աշխարհիկ համարող պետությունից: Ժողովրդավարական պետությունը պարտավոր կրոնական կազմակերպություններին ցուցաբերել միանման մոտեցում, այն չի կարող տարանջատել դավանանքները ըստ մեծերի և փոքրերի, ավանդականների և ոչ ավանդականների, քանի որ իրական ժողովրդավարությունը կայանում է ոչ միայն մեծամասնության կարծիքները և տրամադրությունները հաշվի առնելու, այլ նաև ցանկացած փոքրամասնության իրավունքների և օրինական շահերի

պաշտպանության մեջ»¹⁵ :

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Մ. Վ. Բագլայը սահմանում է «աշխարհիկ պետությունը», որպես պետության և կրոնական միավորումների միմյանցից անջատում, այսինքն՝ միմյանց գործերին փոխադարձ միջամտության անթույլատրելիություն¹⁶ :

Ռ. Ս. Բատիրը սահմանում է պետությունը որպես աշխարհիկ, «եթե այն իր որոշումներում ելնում է ոչ թե հավատի կանխադրույթներից, այլ գործում է բանականության նկատառումներից ելնելով: Որպեսզի պետությունը հասնի կատարյալ աշխարհիկության, այն պետք է իր օրենսդրությունից կատարելապես «արմատախիլ անի» կրոնի բոլոր թաքնված արատները, «մաքրագործի» իրեն դրա ցանկացած դրսևորումներից և գործի միայն բանկանության համաձայն»¹⁷ : Դա բոլորովին չի նշանակում, որ իշխանությունը պետք է հեռանա հավատացյալների և կրոնական դավանանքների խնդիրներից: Պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցությունը տեղի է ունենում ոչ թե այն պատճառով, որ պետությունը հետևում է կրոնական նորմերին, այլ նրա համար, որ այդպիսի փոխգործակցությունը զգալի արդյունք է ունենում հասարակության համար:

Աշխարհիկ պետության սկզբունքի էության հետագա վերլուծության համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է տարբերակել «պետության աշխարհիկությունը» որպես ինքնուրույն հասկացություն, որն ունի աննշան, բայց էական տարբերություն: Աշխարհիկությունը պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցության ընթացում ծագող հարաբերությունների անմիջական գործընթացի բնութագիրն է¹⁸ : Պետության աշխարհիկությունը աշխարհի ժամանակակից ժողովրդավարական պետությունների մեծամասնության մեջ իրավական պետության կառուցման ամենագլխավոր սկզբունքներից մեկն է:

Սույն հետազոտության առարկայի շրջանակում աշխարհիկ պետության բովանդակության ավելի ամբողջական ընկալման ու բացահայտման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է դիտարկել դրա վերաբերյալ անվանի լեզվաբանների և բառարանագիրների մեկնաբանությունները:

Համեմատելով «աշխարհիկ» եզրույթի վերաբերյալ առկա տեսակետները, կարելի է նկատել, որ «աշխարհիկ» հասկացության էությունը հակադրվում է կրոնականին և եկեղեցականին: Ելնելով այդ հակադրությունից՝ աշխարհիկ պետությունն անհրաժեշտ է դիտարկել պետության այնպիսի կառուցվածք, որի պարագայում պետական իշխանու-

թյունը գտնվում է քաղաքական կազմակերպված հասարակության տիրույթում, և ոչ թե՛ կրոնական կազմակերպությունների ձեռքում:

Պետության աշխարհիկությունը ժամանակակից ժողովրդավարական իրավական պետության կարևորագույն բնութագիրն է հանդիսանում, որը ճանաչում, երաշխավորում և պաշտպանում է մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, մասնավորապես, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը: Սակայն բնութագրական հատկանիշից զատ, աշխարհիկությունը բնութագրվում է նաև որպես հասարակական հարաբերություններում մտքի, խղճի, կրոնի և արտահայտման ազատության արժեք, միևնույն ժամանակ հանդես գալով էթիկական կատեգորիա, իդեալ՝ պետության, քաղաքացիների և հանրային ինստիտուտների փոխհարաբերությունների գործընթացում:

Պետության աշխարհիկության հիմնարար պայման է հանդիսանում ցանկացած կրոնական միավորման հավասարությունը օրենքի առջև:

Աշխարհիկության սկզբունքը, նախ և առաջ, ընկած է պետական ապարատի կառուցվածքի և գործունեության հիմքում: Դրա կարևորագույն բաղկացուցիչ մասն է հանդիսանում պետական իշխանության մարմինների աշխարհիկությունը: Այն ենթադրում է պետական մարմինների կազմակերպման և գործառույթի իրականացման նկատմամբ լրացուցիչ պահանջների, պաշտոնատար անձանց մասնագիտական և արտածառայողական գործունեության առանձնահատկությունների առկայություն:

Պետական իշխանության մարմինների աշխարհիկության բովանդակությունը ներառում է այնպիսի տարրեր, ինչպիսիք են՝

- ա. պետական իշխանության մարմինների ձևավորման աշխարհիկությունը,
- բ. պետական իշխանության մարմինների գործունեության աշխարհիկությունը,
- գ. իշխանական լիազորություններով օժտված անձանց սահմանադրաիրավական կարգավիճակի աշխարհիկությունը,
- դ. պաշտոնատար անձանց էթիկայի աշխարհիկությունը,
- ե. պետական խորհրդանիշային համակարգի աշխարհիկությունը¹⁹ :

Պրոֆեսոր Ս. Ա. Մոզգովյոյը իր հետազոտության մեջ նշում է, որ «Անհնար է որևէ աշխարհիկ պետության կայացումն ու զարգացումը՝ առանց այդ պետությունից կրոնական կազմակերպությունների տարանջատման, հետևաբար, աշխարհիկ պետությունը միշտ հանդիսանում է ապակրոնական: Ընդ որում՝ ապակրոնական պետությունը միշտ չէ, որ աշխարհիկ է հանդիսանում: Այն նաև

կարող է ամբողջությամբ աթեիստական լինել: Կատարյալ աշխարհիկ պետությունը հեռացած է ինչպես կրոնից, այնպես էլ աթեիզմից կամ այլ աշխարհայացքից: Պետությունը թույլ է տալիս նրանց գոյակցել իրենց շրջանակներում, միաժամանակ պահպանել աշխարհայացքային բազմակարծություն»²⁰:

Հայաստանի Հանրապետությունում աշխարհիկ պետության սահմանադրական էությունը հիմնվում է անձի իրավական կարգավիճակի հետևյալ սկզբունքների վրա. մարդուն, որպես բարձրագույն արժեք ճանաչելը (հոդվ. 3), բոլորի հավասարությունը օրենքի առջև (հոդվ. 28), խտրականության արգելքը (հոդվ. 29), յուրաքանչյուր անձի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը, (հոդվ. 41).

Աշխարհիկ պետության էության ավելի ճշգրիտ սահմանումն անհրաժեշտ է ոչ միայն մտքի, խղճի և կրոնի ազատության ինստիտուտի հետագա զարգացման համար, այլ նաև ազատության ինստիտուտի՝ ընդհանրապես:

Մարդու մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի երաշխիքների իրականացումից է կախված անձի բազմակողմանի զարգացումը՝ գաղափարական բազմակարծության բացակայության պայմաններում:

Աշխարհիկ պետության էական հատկանիշների շարքում կարելի է առանձնացնել հետևյալները՝

ա) պետության իրավական հիմքի փոխարինման անթույլատրելիությունը որևէ կրոնական ուսմունքով և նրա դրզմաներով,

բ) կրոնական կազմակերպություններին պետական իշխանության գործառնություններ վերապահելու անթույլատրելիությունը,

գ) կրոնական կազմակերպությունների իրավական հավասարությունը օրենքի առջև:

Աշխարհիկ պետության վերոնշյալ հատկանիշներից գատ, անհրաժեշտ է նաև հիշատակել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ պետական ծառայության աշխարհիկությունը, պետական կրթության աշխարհիկ բնույթը (կրոնական ուղղվածության առարկաների գոյության անթույլատրելիությունը միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատություններում, դրանց ներառումը միայն պատմության ուսումնասիրման ծրագրերում), բարձրագույն պաշտոնատար անձանց գործողություններում կրոնական քարոզչության բացակայությունը, կրոնական կազմակերպությունների համար տնտեսական արտոնությունների բացակայությունը, որևէ դավանանքի հարցերով զբաղվող պետական իշխանության հատուկ նշանակության մարմինների ստեղծման և գործունեություն ծավալելու անթույլատրելիությունը:

Հարկ է նաև նկատել, որ կրոնական կազմակերպությունները պետությունից առանձնացնելու հատկանիշի էությունը պետք է բնութագրել հետևյալ երեք պայմանի առկայությամբ՝

ա) պետությունը չի վերահսկում քաղաքացիների վերաբերմունքը ինչպես կրոնի, այնպես էլ դրա բացակայության հանդեպ,

բ) պետությունը միջամտում է կրոնական միավորումների ներքին գործունեությանը միայն նրանց կողմից օրենքը խախտելու դեպքում,

գ) կրոնական միավորումները չեն ազդում պետական մարմինների որոշումների վրա:

Այսպիսով, աշխարհիկ պետության գործունեությունը պետք է ուղղված լինի համապատասխան պայմանների կազմակերպման վրա, որոնց իրականացման ժամանակ պահպանվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև՝ պետության և կրոնական կազմակերպությունների շահերի հավասարակշռությունը՝ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Պետություն-կրոն փոխհարաբերությունների ոլորտում շահերի հավասարակշռության տակ հարկ է հասկանալ անհատի, պետության, կրոնական կազմակերպությունների կարիքների և առաջնահերթությունների, իրավունքների և պարտականությունների օրինական, օպտիմալ և ռացիոնալ հարաբերակցությունը:

Բայց, չնայած պետական և կրոնական կազմակերպությունների միջև պատշաճ հեռավորությանը, պետությունը իրեն իրավունք է վերապահում բացառիկ դեպքերում միջամտելու կրոնական միավորման գործունեությանը: Միջամտությունը պետք է իրականացվի միայն այն չափով, որքանով դա հարկավոր է անձի, կրոնական կազմակերպության օրինական գործունեության, պետական ինքնիշխանության իրավունքների և ազատությունների պաշտպանության, հանրային անվտանգության երաշխավորման համար:

Պետության առանձնացումը կրոնական կազմակերպություններից բոլորովին չի բացառում, այլ նույնիսկ ստեղծում է նախադրյալներ դրանց համագործակցության և փոխգործակցության համար հանրային նշանակության խնդիրները համատեղ լուծելու նպատակով:

Ելնելով աշխարհիկ պետության սկզբունքի էությունը հասկանալու հեղինակային մոտեցումներից՝ աշխարհիկ պետությունն անհրաժեշտ է ընկալել որպես պետության այնպիսի կառուցվածքի առկայություն, որի դեպքում կրոնական միավորումները չեն հանդիսանում պետական իշխանության իրականացման կառուցակարգի մաս, այնուհետև՝ կրոնական նորմերը ներառված չեն իրավական համակարգի մեջ, իսկ պետական մարմինները

փոխգործակցում են կրոնական միավորումների հետ միայն օրենսդրությամբ սահմանված ոլորտներում՝ բոլոր դավանանքների իրավահավասարության պայմանով: Միաժամանակ, ասվածի համատեքստում որպես բացառություն անհրաժեշտ է նկատել, որ արտասահմանյան մի շարք երկրներում (Պորտուգալիա, Դանիա, Կոլումբիա) պատմականորեն ավանդական համարվող կրոնական կառույցներն ունեն ազգային եկեղեցու կարգավիճակ, ինչը, սակայն հիմք չի տալիս պնդելու, որ այդ պետությունները աշխարհիկ չեն:

Նույն տրամաբանության համատեքստում կարծում ենք, որ Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու օրինակով պետության աշխարհիկության սկզբունքից շեղում չի կարող դիտարկվել այն, եթե պետությունը որևէ դավանաբանական ուղղության հարող կառույցի շնորհի որոշակի առավելություններ այլ կրոնական կազմակերպությունների նկատմամբ կամ ճանաչի այն որպես ազգային՝ իր պաշտպանության տակ առնելով:

¹ Տե՛ս, Енгибарян Р.В., Тадевосян Э.В. Конституционное право: Учебник. М: Юристъ, 2000. С.119.

² Ակադեմիկոս Է. Աղայանը իր արդի հայերենի բացատրական բառարանում տվել է «աշխարհիկ» եզրույթի հետևյալ բնութագրումները «1.Առօրյա կյանքի հետ կապված: 2. Ժողովրդական: 3. Ոչ կրոնական:» Միաժամանակ, «Հայոց լեզվի նոր բառարանում» «աշխարհիկ»-ը բացատրվում է «1.աշխարհային, 2.հաճոյասեր, 3. ոչ կրօնական, 4. մ. Աշխարհիկի՝ աշխարհայինի պես»: Իսկ Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանում» հանդիպում ենք «աշխարհիկ» եզրույթի այսպիսի մեկնաբանման «1. Աշխարհական: Աշխարհիկ մարդ: Հոգևորականները աշխարհիկներից աելի են մեղանչում պատուիրանների դեմ: 2. Աշխարհաբար՝ ժողովրդական (լեզու): Մեր աշխարհիկ լեզուն դեռ շատ կարօտ է մշակութեան:...»: Վ. Ի. Գալը իր բացատրական բառարանում տալիս է աշխարհիկության հետևյալ սահմանումը՝ «Աշխարհիկ, դեպի աշխարհը, տարբ. իմաստ. վերաբ., երկրային, աշխարհային, ունայն կամ քաղաքացիական...»: Ս. Ի. Օժեգովը իր «Ռուսաց լեզվի բացատրական բառարանում» սահմանում է. «Աշխարհիկ՝ որպես ոչ եկեղեցական, աշխարհային, քաղաքացիական: Բուրժուա-ազնվական հասարակության մեջ ընտրյալների խավ, որը պատկանում է արտոնյալ դասերին»: Տե՛ս, Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1976թ. էջ 91, Հայոց լեզվի նոր բառարան Գնել արքեպիսկոպոս Ճերճեան, Փարսմազ Կ. Տօնիկեան եւ Արտաշէս Տէր աչատուրեան: Կ. Տօնիկեան եւ Ռդիք Հրատարակչատուն, Պէյրուք, 1992, էջ 162, Ստեփան Մալխասեանց: Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչություն, Երևան, 1944, էջ 197, Даль В.И. Толковый словарь живого великорусского языка. Т. 4. М.: Русский язык, 1982. С. 451, Ожегов С.И. Толковый словарь русского языка / Под общ. ред, Л.И. Скворцова. М., 2007, С. 681:

³ Տե՛ս, Զրույցներ կրոնի և գիտության մասին, Հանրամատչելի դասագիրք, Երևան, 1965թ. էջ 254

⁴ Տե՛ս, Աստվածները մեռնում են, գիտա-աթեիստական տարեգրություն Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան 1962թ. էջ 525:

⁵ Տե՛ս, Лейст О. Э. История политических и правовых учений М.: Юридическая литература, 1997. С.139.

⁶ Տե՛ս, Мень А. В. Религия, культ личности и секулярное государство (заметки историка религии): На пути к свободе совести/ Под ред. Тябикова Т.Б. Москва, 1989. С.99.

⁷ Տե՛ս, Дозорцев П.Н. Развитие России как светского государства (историко-правовой анализ): Дисс. ... доктора юрид. наук: 12.00.01. / Дозорцев Петр Николаевич. Санкт-Петербург, 1998. - С. 58.

⁸ Տե՛ս, Деникаева С.Э. дисс. ... канд. юрид. наук: 12.00.02 / Деникаева Саида Эмирхановна. Махачкала, 2006. С. 48

⁹ Տե՛ս, Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006. С. 425.

¹⁰ Տե՛ս, Мещерякова А.Ф. Светское государство в современной России конституционно- правовой анализ: дис. ... канд. юрид. наук: 12.00.02 / Мещерякова Анна Федоровна. - Пенза, 2009. С.28.

¹¹ Տե՛ս, Конституционное право России: учебник для студентов высших учебных заведений / п. - М.: Юристъ, 2004.С.193.

¹² Տե՛ս, Понкин И.В. Светскость государства. М.: Издательство Учебно-научного центра довузовского образования, 2004.С.49.

¹³ Տե՛ս, Туманов В. А., Чиркин В. Е., Юдин Ю. А. В. Е. Чиркин, Ю. А. Юдин; Руководитель авт. коллектива С. М. Шахрай. - 2-е изд., перераб. и доп. М.: Большая рос. энцикл.: Юристъ, 1997. С.73.

¹⁴ Տե՛ս, Иванова Л.О. Религия и права человека // Социологические исследования (СОЦИС) : Ежемесячный научный и общественно-политический журнал. 1998. №6. С.103.

¹⁵ Տե՛ս, Лунарев Г. Конституционные проблемы законодательства о религии и религиозных организациях // Религия и

право. М.: 2004, N 4. С.7.

¹⁶ Տե՛ս, Баглай М.В. Конституционное право Российской Федерации. Учебник для ВУЗов: учеб. пособие / Баглай М.В. - 10-е изд. - М.: Норма: ИНФРА-М, 2013. С.139

¹⁷ Տե՛ս, Батыр Р.С. Вместо реформы // сборник статей. Нижний Новгород - Ярославль: Издательский дом “Медина”, 2007. С.88

¹⁸ Տե՛ս, Линкин В.Н. Светскость государственной службы как одна из составляющих реализации принципа светского государства // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. Ростов н/Д. 2013. N11. С.9.

¹⁹ Տե՛ս, Линкин В.Н. Светскость государственной службы как одна из составляющих реализации принципа светского государства // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. Ростов н/Д., 2013. N11 С.10.

²⁰ Տե՛ս, Мозговой С.А. Светское государство как мировоззренчески нейтральное // Социономикум: Международный сборник научно-практических работ. Вып. - Ростов- н./Д. 2006. С.42.

Օգտագործված գրականության ցանկ

1. Էդուարդ Բագրատի Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան 1976թ.:
2. Հայոց լեզվի նոր բառարան Գնէլ արքեպիսկոպոս Ճէրէճեան, Փարամազ Կ. Տօնիկեան և Արտաշէս Տէր Խաչատուրեան: Կ. Տօնիկեան և Որդիք Հրատարակչատուն, Պէլյուք, 1992:
3. Ստեփան Մալխասեանց: Հայերեն բացատրական բառարան, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երևան, 1944
4. Զրույցներ կրոնի և գիտության մասին, Հանրամատչելի դասագիրք, Երևան, 1965թ.:
5. Աստվածները մեռնում են, գիտա-արեխտական տարեգրություն Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան 1962թ.:
6. Даль В.И. Толковый словарь живого великорусского языка. Т. 4. М.: Русский язык, 1982.
7. Ожегов С.И. Толковый словарь русского языка / Под общ. ред, Л.И. Скворцова. М., 2007,
8. Линкин В.Н. Светскость государственной службы как одна из составляющих реализации принципа светского государства // Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление. Ростов н/Д., 2013.
9. Мозговой С.А. Светское государство как мировоззренчески нейтральное// Социономикум: Международный сборник научно-практических работ. Вып. Ростов- н./Д. 2006.
10. Баглай М.В. Конституционное право Российской Федерации. Учебник для ВУЗов: учеб. пособие / Баглай М.В. - 10-е изд. М.: Норма: ИНФРА-М, 2013.
11. Батыр Р.С. Вместо реформы // сборник статей. Нижний Новгород - Ярославль: Издательский дом “Медина”, 2007.
12. Лупарев Г. Конституционные проблемы законодательства о религии и религиозных организациях // Религия и право. М.: 2004,
13. Иванова Л.О. Религия и права человека // Социологические исследования (СОЦИС): Ежемесячный научный и общественно-политический журнал. 1998.
14. Туманов В. А., Чиркин В. Е., Юдин Ю. А. Конституция РФ - энциклопедический словарь / В. А. Туманов, В. Е. Чиркин, Ю. А. Юдин; Руководитель авт. коллектива С. М. Шахрай. -2-е изд., перераб. и доп. М.: Большая рос. энцикл.: Юристь, 1997.
15. Конституционное право России: учебник для студентов высших учебных заведений / Козлова Е.И., Кутафин О.Е. - 3-е изд., перераб. и доп. - М.: Юристь, 2004.
16. Понкин И.В. Светскость государства. М.: Издательство Учебно-научного центра довузовского образования, 2004.
17. Мещерякова А.Ф. Светское государство в современной России конституционно- правовой анализ: дис. ... канд. юрид. наук: 12.00.02 / Мещерякова Анна Федоровна. - Пенза, 2009.
18. Арутюнян Г.Г., Баглай М.В. Конституционное право: Энциклопедический словарь. М., 2006.
19. Лейст О. Э. История политических и правовых учений М.: Юридическая литература, 1997.
20. Мень А. В. Религия, культ личности и секулярное государство (заметки историка религии): На пути к свободе совести/ Под ред. Тябикова Т.Б. Москва, 1989.
21. Дозорцев П.Н. Развитие России как светского государства (историко-правовой анализ): Дисс. ... доктора юрид. наук: 12.00.01. / Дозорцев Петр Николаевич. Санкт-Петербург, 1998.
22. Деникаева С.Э. Конституционно-правовые основы формирования Российской Федерации как светского государства: дисс. ... канд. юрид. наук: 12.00.02 / Деникаева Саида Эмирхановна. Махачкала, 2006.
23. Енгибарян Р.В., Тадевосян Э.В. Конституционное право: Учебник. М: Юристь, 2000.

Vahe Torosyan

Преподаватель предмета “Теория государства и права”
Европейской региональной образовательной академии

РЕЗЮМЕ

Светское государство как основа конституционного строя Республики Армения

В статье затронуто исследование одной из характеризующих форму государства черт в Республике Армения – конституционного строя светского государства.

Придавая важность проблемам реализации принципа светского государства и путям их решения, раскрыв механизмы взаимодействия религиозных организаций и органов государственной власти в светском государстве, был сделан вывод: в светском государстве религиозные нормы не являются частью правовой системы, религиозные организации отделены от органов государственной власти, за исключением структур, имеющих статус национальной церкви, как например Армянская Апостольская Святая Церковь в Республике Армения.

Ключевые слова: *Светское государство, церковь, механизм взаимодействия религиозных организаций и органов государственной власти.*

Vahe Torosyan

European Regional Educational Academy;
professor of the subject “Theory of State and Law”

SUMMARY

Secular State as a basis of the constitutional system of the Republic of Armenia

The article touches upon the study of one of the features characterizing the form of the state in the Republic of Armenia - the constitutional system of a secular state.

Attaching importance to the problems of realizing the principle of a secular state and ways of solving them, revealing the mechanisms of interaction between religious organizations and public authorities in a secular state, the conclusion was drawn: in a secular state, religious norms are not part of the legal system, religious organizations are separated from government bodies, with the exception of structures that have the status of a national church, such as the Armenian Apostolic Holy Church in the Republic of Armenia.

Keywords: *Secular state, church, mechanism of interaction between religious organizations and public authorities.*